ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 03/11/6236-19
09.07.2019թ.

ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՁԱԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2019 թվականի
հունիսի 26-ի գրության

Հարգելի պարոն Ձադոյան,

Շնորհակալություն ենք հայտնում գյուղատնտեսական ծրագրերի 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի, ներառյալ 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտի նախագծերի վերաբերյալ 2019 թվականի հունիսի 14-ին տեղի ունեցած հանրային քննարկմանը Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամների, մասնավորապես Գյուղատնտեսական դաշինքի ներկայացուցիչների ակտիվ մասնակցության և ներկայացված առաջարկությունների ու դիտողությունների համար, որոնք ընդունվել են ի գիտություն:

Հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը /այսուհետ՝ Նախարարություն/ մեծապես կարևորում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավումը պետական կառավարման համակարգի աշխատանքներում՝ բաց և կառուցողական երկխոսության մթնոլորտում ընթացող քննարկումների արդյունքում առավել արդյունավետ, ներառական որոշումների կայացման նպատակով և հետայսու նույնպես ակնկալում ենք Ձեր ներդրումն ու մասնակցությունն այդ գործընթացներում:

Միաժամանակ տեղեկացնում ենք նաև, որ ներկայումս իրականացվում են գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության մի շարք ծրագրեր: Դրանք են՝

- «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր, որի շրջանակում գյուղատնտեսական կոոպերատիվներին վարկերը տրամադրվում են 3 % տոկոսադրույքով,
- «Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագիր, որի շրջանակում գյուղատնտեսական կոոպերատիվներին վարկերը տրամադրվում են 0 % տոկոսադրույքով,
- «Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագիր, որի շրջանակում նվազագույնը 3

հա այգի հիմնող գյուղատնտեսական կոոպերատիվներին վարկերը տրամադրվում են 0 % տոկոսադրույքով,

- «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման» ծրագիր, որի շրջանակում գյուղատնտեսական կոոպերատիվներին վարկերը տրամադրվում են 0 % տոկոսադրույքով,
- «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագիր, որի շրջանակում նվազագույնը 3 հա հողատարածքում ներդնող գյուղատնտեսական կոոպերատիվներին վարկերը տրամադրվում են 0 % տոկոսադրույքով:

Բացի այդ, որոշ պետական աջակցության ծրագրերով նախատեսվում է կոոպերատիվներին տրամադրել կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում, ինչպես նաև քննարկման փուլում է դրանց հարկային բեռի թեթևացմանն ուղղված գործընթացը:

Ինչ վերաբերում է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի վերաբերյալ առաջարկությանը, ապա նկատենք, որ գյուղատնտեսությունում փոքր ֆինանսական միջոցների ներդրումն ունի մեծ ռիսկայնություն, հատկապես եթե դրանք վարկային միջոցներ են: Այդ գումարները հիմնականում օգտագործվում են ոչ նպատակային, որի արդյունքում քաղաքացիներն ընկնում են վարկային բեռի տակ: Դրա մասին են վկայում նաև բազմաթիվ ֆերմերների հետ ունեցած մեր հարցազրույցները: Վերը նշված հանգամանքներից ելնելով՝ ներկայումս անհրաժեշտ է ներքևի շեմը թողնել անփոփոխ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

7/11/2019

ԱՐՏԱԿ ՔԱՄԱԼՅԱՆ

Signed by: KAMALYAN ARTAK 1905700881

ԱՐՏԱԿ ՔԱՄԱԼՅԱՆ

կատ.՝ տեղեկատվության և հասարակայնության